

**Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի «Մաթեմատիկա» առարկայից
աշակերտների գիտելիքների ստուգման ուղեցույց**

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է երեք տեսակի առաջադրանքներից՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ:

Թեստի առաջադրանքների բաշխումը ըստ ներկայացման ձևի:

Աղյուսակ 1

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Առաջադրանքների քանակը	Նախնական առավելագույն միավորը	Մասնաբաժինը (%) ըստ միավորների
1	Ընտրովի պատասխանով	10	10	50
2	Կարճ պատասխանով	5	5	25
3	Ընդարձակ պատասխանով	2	5	25
	Ընդամենը	17	20	100

Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-17-րդ առաջադրանքները: 16-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է առավելագույնը՝ 3 միավոր, իսկ 17-րդ առաջադրանքինը՝ 2 միավոր:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 10 միավորանոց համակարգի:

Դրական են համարվում 6 (վեց) և ավելի միավորները:

Աշխատանքի կատարման համար հատկացվում է 90 րոպե: